

16306

16307

16308

16309

16310

16311

16312

16313

891 99

7-89

142

C

58

ԲԵՐՆԱՏԵՅՆ

Կը

# ԾԱՂԻԿ ԵՒ ՊՏՈՒԴ

---

ՈՒՌՄԵՐԵՆԻՑ  
ՈՒԽԲ. ՄԵԼԻՔ-ՄՈՒՍԵԱՆՑ

---

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ  
ՏՊԱՐԱՆ Յ. Ի. ԼԻԲԵՐՄԱՆԻ  
1896

3604

ԹԱՂԻԿ ԵՒ ՊՏԱԿԻ

Дозволено цензурою, С.-Петербургъ, 10 Января 1896 г.

7882-17

Աւուանս - ծաղկելը: Ահա վըա հասաւ տաք  
գարունը, ծառերն ու թփերը կանաչեցին. դաշտե-  
րում ու պարտէզներում սկսեցին փալփլել գյնը-  
գյն ծաղեկները:

Ո՞վ է կարող սառնասրութեամբ գիմաւորել  
նոր արթնացող բնութեանը. ո՞վ չէ շնորհաւորել  
նրա առաջին բուրումը սրտի ակամայ բերկրու-  
թեամբ. ո՞վ չէ ականջ գրել երիտասարդ բնութեան  
համբ խօսակցութեանը: Միթէ մարդս, որ այնքան  
առատութեամբ վայելումէ բնութեան պարզեները,  
կարող է անտարբերութեամբ օգտուել նրանցից և  
ներքին կարիք չլդալ աւելի մօտիկ ծանօթանալու  
բնութեան հետ: Ներշնչել ծաղեկների անուշահոտ  
բուրումը, յագենալ անուշահամ մրգերով և ինքն  
իրեն չհարցնել, թէ ի՞նչպէս են հասնում պտուդ-  
ները, ի՞նչպէս ծաղկում ծաղեկները, ո՞րտեղից է  
ստացւում նրանց քաղցր բուրումը, դա առնուաղը  
տարօրինակ կը լինէր: Միթէ կան մարդիկ, որոնք

բնութեան պարզեների մէջ միմիայն նիւթական բաւականութիւն են փնտռում:

Նատ կարելի է աշխարհիս երեսին կան այդպիսիները, բայց միևնույն ժամանակ կան հազարաւոր տարիքով ու հոգով երիտասարդ մարդիկ, որոնք սրտի անհամբեր բարբախումով շտապում են խորասուղուել բնութեան դաղտնիքների մէջ և ըմբռնել նրա խորհրդաւոր շշնջեւնը:

Հէնց այդպիսիների համար էլ սկսում եմ իմ նկարագրութիւնը:

Աչա նայեցէք, որքան դեղեցիկ է այս ծաղեկներով ծածկուած կեռասենին: Այդ ծաղեկներից երբ նրանք կը թառամեն, կը գոյանան այն հիւթալից ու անուշահամ պտուղները, որ մեր ընթերցողներից շատերը գուցէ շատ անգամ են անուշարել: Բայց այդ ի՞նչ զարմանալի զօրութիւն է, որի շնորհիւ ծաղկում են ծաղեկները և ապա պտուղ դառնում: Աչա հարցեր, որ ես մտադիր եմ պարզել իմ սիրելի ընթերցողներին:

Կտրենք կեռասենուց մի քանի ծաղեկ և ձեռքներս առած զըսց անենք բնութեան հրաշալիքների մասին:

«Բայց սրանց մը թէ կարելի է ծաղեկ անուանել» գուցէ հարցնես գու ընթերցող մտքումդ կեռասենու համեստ ծաղեկը համեմատելով շքեղ գէորգինայի կամ անուշահոտ վարդի հետ: Այս, իմ ընթերցող զրանք ծաղեկ են և այն էլ ամենակատարեալ ծաղեկ: Թէպէտե շատ քիչ գեղեցկութիւն ունեն, համեմատելով պարտէղում և ծաղ-

կամաններում քո պահած ու փայփայած ծաղեկների հետ: Փայլուն ու գեղեցիկ թերթիկների և հոտի մէջ չէ կայանում վարդի, յասմիկի կամ ընդհանրապէս ծաղեկների էութիւնը, այլ այն թելիկների, որ բնութիւնը տեղաւորել է նրանց կենտրոնում և որոնց վերայ դու առհասարակ ամենելին ուշադրութիւն չես դարձնում:

Մարդս եսական է, դրա համար էլ միայն այն բաներն է գնահատում, ինչ որ անմիջապէս նրան օգուտ է տալիս և կամ բաւականութիւն է պատճառում: Նա սիրում է ծաղեկը, նրա փայլուն ու գեղեցիկ գոյների կամ անոյշ հոտի համար: անխիզ կերպով նա կարառում է ծաղեկները և մտքովն անգամ չէ անցկացնում, որ կարելով նրան հարազատ ոստից, նա ոչնչացնում է մի ամբողջ պտուղ: Պարտիզպանը արհամարհանքով է նայում տգեղ ու հոտ չունեցող ծաղեկների վերայ: Նա նրանցից պտուղ է սպասում, և հէնց որ պտուղները հասնում են, կրկին եսականութեամբ նրանց զոհում է իւր ձաշակին:

Կեռասենու ծաղիկն հասերը: Կեռասենու սպիտակ, անուշահոտութիւնից զուրկ ծաղեկից, ինչպէս մի քիչ առաջ էլ ասացի, զարդանում է հիւթալից ու անուշահամ կեռասը: Բայց ինչի՞ց է նա ածում, մեծանում: Կայ արդեօք ծաղեկի և նրա պտղի մէջ ամենաշընչին նմանութիւն անդամ: Ամբողջ ծաղեկից, ըստ երեսյթին, աղատուում է միայն նրա պատուանդանը՝ կոթը: ապա որանեղեց է այդ նոյն կոթի վերայ յետոյ արդէն պտուղ երեսում: Մի քիչ համբ-

բութիւն ունեցէք, և աշա շուտով այդ բոլորը  
կ'իմանաք:


Հէնյ որ գարնանային արեղակը իւր մեղմ ձա-  
ռագայթներով սկսում է տաքացնել սառած բնու-  
թիւնը, կեռասենիների միլլիոնները ծաղիկների  
կոկոնները, որոնք այդ ժամանակ զարդարում են  
իրենց հաստ զլիկներով ծառերի ճիւղերն ու ոս-  
տերը, կարծես քաղցր քնից ղարթներով մի կողմէ  
են քաշում հինգ բաց-կանաչ տերեկիներից պատ-  
րաստուած վերմակները և աշա այդ տերեների  
միջեց երեսում են հինգ սպիտակ թերթիկներ, ո-  
րոնք, իբրև ծաղկի հագուստ, պաշպանում են նրա  
քնքոյշ մարմինը խիստ քամիներից և առաւտեան  
սառն եղեամից:

Կոկոնը վերմակի նման ծածկող հինգ բաց-կա-  
նաչ տերեկիները ծաղկի բաժանն են կազմում:  
իսկ այդ բաժակի միջեց բարձրացող հինգ սպի-  
տակ ու քնքոյշ թերթիկները նրա պատճեն են  
կոչում:

Բայց զրանք էլ չեն ներկայացնում ծաղկի էռու-  
թեան ղարմանալի զաղանիքը. որովհետեւ բաժակը  
այդտեղ լոկ ծածկոցի՝ պաշտպանող կեղևի գեր  
է կատարում, իսկ պասկը գեղեցիկ հագուստի-  
կանցնի մի քանի ժամանակ, ծաղկը կը բեղմա-  
ւորուի և, երբ այլևս նա այդպիսի պաշտպան-  
ների անհրաժեշտ տութիւն չի զգայ, այն ժա-  
մանակ նրանք կը թառամեն և ապա բոլորովին  
կը թափուեն:

Այժմ նայենք բաժակի մէջը և տեսնենք ար-

դէօք չկայ այնտեղ որևէ է բան: Աշա նրա կողքե-  
րից կպած են կարգով 30-ից մինչև 40 հատ ուղիղ  
կանգնած բարակ սպիտակագոյն թելիկներ, որոնցից  
իւրաքանչիւրի ծայրին գտնւում է մի մի գեղնա-  
գոյն, քնքոյշ զլիսիկ. իսկ այդ թելիկներից կազ-  
մուած շրջանակի մէջ տեղում բարձրանում է մի  
խողովակաձև ցողուն, որի ծայրը վերջանում է  
շրթունքի ձեռվ կլոր բացարած մի փոքրիկ հաս-  
տութիւնով:



Նկար 1. Կեռասենու ծաղկի կտրուածքը:  
ա. վարսանդը, բ. բաժակի թերթիկը, գ. պասկի թերթիկը, դ. առէչքը:

Աշա ծաղկի ընտանեկան օջախը, նրա կեան-  
քը, նրա ամբողջ էռութիւնը: Սպիտակագոյն բա-  
րակ թելիկները ծաղկի ամենազլիսաւոր մասե-  
րից մէկը կարող են համարուել. նրանք կրում  
են իրենց վերայ բեղմաւորիչ ծաղկափոշին, որի  
ընդունելութեան համար ծառայում է մէջ տե-  
ղի խողովակաձև ցողունը, որ վարանդ անունն  
է կրում:

Սպիտակ թելիկները իրենց բոլոր մասերով  
զիսութեան մէջ յայտնի են առէջչ անունով. նրանց

ծայրին գտնւող դեղնագոյն գլխիկները ներկայաց-  
նում են փոշեով լիքը փոքրիկ պարկիկներ, որի  
պատճառով էլ խշանօն են կոչւում:  
Փոշանօթների մէջ պարունակւող  
ծառէտիւլին այն աստիճանի մա-  
նը հատիկներից է կաղմուած լի-  
նում, որ առանց խոշրացոյց ա-  
պակու՝ հասարակ աչքով հագեւ  
նկատելի են. ահա հէնց այդ ծաղ-  
կափոշու ընչին հատիկներն են, որ  
բոյսին դրդում, գոգուում են պտուղ  
կազմելու. առանց նրանց և ոչ մի  
ծառ չէ կարող պտուղ տալ:

Նկար 2. Առէչք:  
ա. փոշանօթը, բ. ա-  
ռէչքի կոթը կամ  
թելեկ:

Առէչքները իրենց բոլոր մասե-  
րով, այսինքն սպիտակագոյն թելեկ-  
ներով, փոշանօթներով և նրանց մէջը պարունակւող  
ծաղկափոշով կաղմում են բոյսի արական գործա-  
րանները. իսկ նրանց մէջ տեղում գտնւող վարսան-  
դը իգական անդամի, ուրիշ խօսքով՝ կնոջ գեր է  
կատարում:

Ծառէտիւլին բեղնաւորութւն: Արեգակի տաք ծառա-  
գայթների տակ շուտով հասնում է ծաղկափոշին,  
և ահա օդի ամենաթեթև տատանումից փոշանօ-  
թի թաղանթը պատռումէ ու նրա միջից գուրս  
է թափւում ծաղկափոշին, որի իւրաքանչիւր մի հա-  
տիկը ընդունակութիւն ունի բեղնաւորելու, հէնց  
որ ընկնի վարսանդի ծայրի փոքրիկ հաստութիւն  
կաղմող շրթնաձև բացուածքի վերայ, որը ուրիշ  
կերպով առն է կոչւում:

Զգինուած աչքերի համար աննշմարելի ծաղ-  
կափոշու իւրաքանչիւր հատիկը խօշորացոյց ապա-  
կու տակ երեսում է իրը մի փոքրիկ պարկ, լիքը  
մի առանձին տեսակ հեղուկով:

Ծաղկափոշին թափուելու ժամանակ վարսան-  
դի սպիի վերայ երեսում է կաղուն հիւթի մի փոք-  
րիկ կաթիլ. ուստի երբ փոշու հատիկը ընկնում է  
նրա վերայ, իսկոյն կաղումէ սպիից. հակառակ դէպ-  
քում ամենաթեթև քամին անդամ շատ հեշտու-  
թեամբ կարող էր թոցնել նրան սպիի վերայից և  
այդպիսով զրկել ծաղկին բեղնաւորուելուց: Ծաղ-  
կափոշու մի հատիկը բաւական է վարսանդը բեղնա-  
ւորելու համար. իսկ այնուհետեւ պտղի վարգացման  
գործը ինքն իրեն կը գնայ շատ յաջողութեամբ:

Վարսանդը, ինչպէս վերե էլ ա-  
սացի, այն գատարէ խօզովակաձև ցո-  
ղունն է, որ բարձրանումէ ծաղկի  
մէջ տեղից. նրա հիմքը, այսինքն տա-  
կի մասը կոչւում է «Եղնարան»: Եթէ  
ծաղկի բաժակի կանաչ թերթիկները  
պոկենք, այն ժամանակ այդ սերմնա-  
րանը շատ պարզ կերպով կարող ենք  
տեսնել. նա վարսանդի տակի բաւա-  
կանին հաստ ու ուռած մասն է կաղ-  
մում: Սերմնարանը միանում է սպիի  
հետ մի շատ նեղ ու երկար խողովա-  
կով որը վարսանդի միջին մասն է  
կաղմում և կոչւումէ հապորդիչ: Զնա-  
յելով որ այդ խողովակաձև անցքը

Նկար 3. Վարսանդ:  
ա. սպի, բ. հաղորդի-  
չը, գ. սերմնարանը,  
դ. ծաղկի կոթը:

շատ նեղէ, բայց և այնպէս նա բեղմնաւորիչ ծաղկափոշու հատիկների անցնելու համար բաւականին լսյն կարող է համարուել:

Այսպէս ուրեմն վարսանդը կազմուած է երեք մասից. — տակի հաստ ու ուռած, մութկանաշագյն սերմնարանից, միջին դեղին-կանաչագյն խողովակից, որ հաղորդիչ է կոչում և վերջապէս վերին բաց-շրթնաձև սպիր:

Կեռաւսենու ծաղկի մէջ վարսանդն ու առէջքները իրար շատ մօտ են դանւում, և համարեա հաւասար բարձրութիւն ունեն, այնպէս որ ծաղկափոշին շատ չեշտութեամբ է ընկնում սպիրի վերայ: Բայց այնպիսի ծաղկիկներ կան, որոնց բեղմնաւորուելը այդքան դիւրութեամբ չէ կատարւում, որովհետեւ նրանց վարսանդը առէջքներից բաւականին բարձր է լինում. դրա համար անհրաժեշտ է, որ առէջքները ձգուեն ու հասնեն վարսանդի բարձրութեան:

Այդպիսի ծաղկիկների բեղմնաւորուելը վերին սատիճանի հետաքրքիր կերպով է կատարւում: Երբ փոշանօթների բացուելու ժամանակը մօտենում է, վարսանդը, կարծես այդ զգալով, կոանում է դէպի առէջքները, փոշին ընկնում է սպիրի վերայ, և ահա վարսանդը նորից հպարտութեամբ ուղղուում, բարձրանում է, իւր տակը թողնելով կարճահասակ առէջքներին:

Բայց աւելի ևս զարմանալի դէպքեր են պատահում. կան ծաղկիկներ, որոնք միմիայն առէջքներ ունեն, նրանց մէջ վարսանդ չէ լինում. — դրանք այսպէս անուանուած արական ծաղկիներ են, որոնք

չեն կարող պառաղ տալ, որովհետեւ միմիայն բեղմնաւորիչ փոշի ունի. բայց դրա փոխարէն այդպիսի բոյսերն ունեն և իժական ծաղկիներ, որոնց մէջ միմիայն վարսանդ է գտնւում, իսկ առէջքներ և ոչ մի հատ այդ պատճառով էլ նրանք իրարից մեծ կախումն ունեն. նրանից միայն այն ժամանակ կարելի է պառաղ ստանալ երբ արական ծաղկի բեղմնաւորիչ փոշու հատիկները կ'ընկնեն իդական ծաղկի սպիրի վերայ:

Քամին և ծաղկիները: Օդը բնութեան մէջ մեծ դեր է կատարում: Նրա մէջ են թաքնուած կեանքի ու մահուան սաղմերը. նա մի ժանապարհ է կենդանութիւնից դէպի մահ և մահից դէպի կենդանութիւն: Զրկեցէք կենդանի արարածին օդից, և նա կը մեռնի, կը հանգժի. զրկեցէք օդից մեռած մարմինը, և նա կը քարանայ: Ենտեղ ուր օդը ազատ մուտք ունի, նա պահպանում է կենսականութիւնը, իսկ մեռած մարմինների մէջ փառութիւն է առաջացնում, որպէս զի նրանց քայլայուած մասերից կենդանի մարմիններ ստեղծագործի, նորից նրանց դէպի կեանք մղի:

Օդից պակաս նշանաւոր դեր չէ կատարում բնութեան կեանքի մէջ և նորա շարժումը, այսինքն օդային հոսանքները՝ քամիները: Նրանց նշանակութիւնը, նրանց մասնակցութիւն ամբողջ աշխարհի կենդանութեան գործում մատցելի չէ հասարակ գիտողութեան. միայն գիտութիւնն ու գիտնական հետազոտութիւններն են բարձրացնում նրանց երեսը ծածկող խորհրդաւոր զիմակը և բաց անում մեր առաջ սքանչելի տեսարաններ:

Քամին մի տեղից դէպի միւսն է տանում տաքութիւնն ու խոնաւութիւնը, ցրւում է մեր շնչառութեան ժամանակ արտաշնչած այն վնասակար գողը, որ ածխաթթու է կոչում, նրա տեղը նոր, թարմ օդ է բերում, և այդպիսով նպաստում շնչառութեան: Իսկ որտեղ է տանում այն ածխաթթու գաղը, որ մենք արտաշնչում ենք և որը այնքան վնասակար է մարդկանց ու կենդանիների համար: Նա տանում է նրան տալիս բոյսերին, որոնց համար այդ գաղը իբրև կենդանութեան աղբիւր է ծառայում: Բոյսերը նոյնպէս արտաշնչում են մի տեսակ գաղ, որ թթուածին է կոչում. այդտեղ էլ գարձեալ օգնութեան է հասնում քամին և այդ գաղը հեռայնելով նրանցից, մատակարարում է մարդկանց և կենդանիներին, առանց որի վերջիններս չեն կարող գոյութիւն ունենալ: Եթէ երկրիս վերայ քամի չլինէր, կենդանիներն ու մարդիկ շնչառապառ կը մեռնէին իրենց արտաշնչութիւնից կաղմուած միժնոլորդի մէջ. առանց նրան բոյսերը կը թառամէին և երկիրը կը քարանար բոլորովին: Առանց քամու կը չորանային գետերը, վտակներն ու աղբիւրները. ծովերը կը գառնային գարշահոսութեան վայրեր. ամբողջ երկրի վերայ մահ կը տիրէր:

Որքան էլ ընդարձակ չլինի քամու գործունէութեան ասպարէղը, բայց և այնպէս նա չէ մոռանում և մանկիկ ծաղկներին. նրանց էլ է օգնութեան ձեռք մեկնում: նա արթնայնում է ձմեռուայ քնից ծառերի բուներն ու խոտերի ցօղունները. պատռում է փոշանօթների հասած թաղանթնե-

րը և, ցնցելով նրանց, բեղմնաւորիչ ծաղկափոշին թափում է վարսանդի սպիր վերայ, լինեն նրանք մօտիկ, թէ հեռու առանց խարութեան:

Քամին, թափառելով երկրի մակերեցյթի վերայ, հաւաքում է արական ծաղկների փոշին և ոլանալով դէպի հեռաւոր երկիրներ ցրւում է նրբանց ամեն ուղղութեամբ: Ծաղկափոշու հատիկները թեթև են, իսկ քանին հզօր. և ահա նրա հոսանքի հետ տարւում են միլլիոնաւոր այդտեսակ հատիկներ և համնում են իրենց ճանապարհորդութեան նպատակին, այսինքն այն ծառերին, որոնց ոստերը զարդարող կոյսանարատ ծաղկները, պրանուած իրենց բոլոր փայլով, անհամբեր սպասում են այն փեսացուներին, որոնց վիճակուած է ամուսնական առաջին ջերմ համբոյը զրոշմելու իրենց կիսաբայ կուսական շրթունքների վերայ:

Եւ երբեմն ինչպի՞սի հեռաւոր երկրներից են բերւում նրանք քամու սրբնթաց թեերի վերայ, ինչպի՞սի ահագին ճանապարհորդութիւններ է անում քամին այդ նպատակով:

Բնութիւնն էլ կարծես այդ բանը աչքի առաջ ունենալով, այդ տեսակ բոյսերին այնպիսի առատութեամբ բեղմնաւորիչ փոշի է պարզել, որ քամին, առանց մեծ վտանգ պատճառելու նրանց բեղմնաւորման գործին, կարող է իւր հետ վերցրած ծաղկափոշու մեծ մասը կորցնել. բաւական է եթէ իւրաքանչիր մի ծաղկի միլլիոնաւոր բեղմնաւորիչ հատիկներից գոնէ մի քանիսը հասցնի հեռաւոր երկրներում գտնւող բոյսերի իդական գործարան-

ներին: Բայցի գրանից բնութիւնը մի այլ յարմարութիւն էլ է ստեղծել: այդտեսակ բոյսերի մեծ մասը այնքան շուտ են ծաղկում, որ տերեւները դեռ ևս բացուած չեն լինում, ուրեմն և չեն կարողանում ծաղկափոշու առաջը բռնել, և նա, առանց այդտեղ էլ մեծ կորուստներ ունենալու, անարգել նստում է սպիթի վերայ:

Թէ որքան զարմանալի է քամու դերը այդտեղ պարզ երեւում է հետեւեալ օրինակից:

Դերմանացոյ թերլին մայրաքաղաքի բուսաբանական պարտիզում կար մի ծառ, որի վերայ միմիայն իգական ծաղիկներ էին դանւում, ուրիշ խօսքով՝ նրա ծաղիկներից և ոչ մէկը առէքներ չունէր. նա բերուած էր հաղարաւոր վերսաերով հեռու՛ ովկիանոսի այն կողմը դանւող, Ամերիկա կոչուած երկրից, ուր կան այդ ծառի և այն տեսակները, որոնց վերայ միմիայն արական ծաղիկներ են դանւում: Առաջին անդամից մեղ այնպէս կարող էր թուել որ բուսաբանական պարտիզում դանւող այդ իգական ծառը, իւր մօտ չունենալով և ոչ մի արական ծաղիկ, չէր կարող բեղմնաւորուել ուրեմն և անպտուղ կը մնար. բայց մեր այդպիսի շուտափյթեղակացութիւնը սխալ կը լինէր. որովհետեւ քամին, յաղթելով ամեն արգելքների, ոլանում էր ծովերի ու հովիսաների, անտառների ու մարգագետինների վերայով և ամեն տարի այդ հեռաւոր երկրից բերում էր իւր հետ բեղմնաւորիչ ծաղկափոշի այն մի հատիկ ծառի համար, որին մարգիկ անջատել էին իւր հարազատ հողեց, միմիայն իրենց անսահման հե-

տաքրքրութեանը բաւականութիւն տալու համար: Սյսպիսով քամին բոյսերի համար կարծես խնամախօսի դեր է կատարում: բայց, պիտի խոստովանել, աղնիւ ու բարեխիղձ խնամախօսի. որովհետեւ նա երբէք չէ սխալում հարսնացուի ընտրութեան մէջ, և երկու տարբեր սերունդներ չէ միացնում իրար հետ անհաւասար ամուսնութեամբ:

Միջադներն ու ծաղկեները: Կարծես գիւթական զօրութեամբ քամին հեռաւոր աշխարհներից բերում է իւր հետ բեղմնաւորիչ փոշին և բաժանում նրանց բիւրաւոր հատիկները իգական ծաղիկներին, որոնք այլապէս պիտի անպտուղ թառամէին, և այդպիսով բազմատեսակ պտուղների գոյութեան պատճառ է դառնում: Մեծ է այդ կողմից քամու կատարած դերը, հզօր է նրա ցիցը, հրաշալի է նրա ներգործութիւնը. սակայն նա էլ ունի մրցակիցներ. բեղմնաւորման գոծի մէջ միջատները աւելի ևս սքանչելի երեցիթ են ներկայացնում:

\*) «Մեղնից ով չդիտէ, թէ միջատների համար որքան անհրաժեշտ են ծաղիկները. ով չէ նկատել թէ ինպէս մեղուները, դէպի փետակը վերագառնալիս, իրենց հետ բերում են մեծ քանակութեամբ, ծաղիկների վերայից հաւաքած, վեղնագյն փոշի. և վերջապէս ով չէ լսել, որ մեղուներն ու թիթեռները կերակրւում են ծաղիկների մեղրովն ու փոշիովը. գրանք այնքան սովորական բաներ են, որ նրանց մասին խօսելն անդամ չարմէր. բայց արգեօք շատերը դաղափար ունեն, թէ

\*.) Յաւելուած թարգմանչեց:

ծաղիկները իրենք որքան կախումն ունեն այդ նոյն միջատներից»:

«Մարդկային ամենահարուստ երեակայութիւնըն անգամ չէ կարող ստեղծել աւելի շքեղ պատկերներ, ձեւը ու դրյներ, քան այն, ինչ որ բնութիւնը մեղ տալիս է իւր ստեղծագործած բուսական թագաւորութեան—ծաղիկների մէջ։ Բայց ինչի՞ համար են ծաղիկների այդ գեղեցիկ ու հրաշալի ձեւներն։ Ինչի՞ համար են այն հրապուրիչ ու ներգաշնակ, գոյներն ու թաւշեայ հագուստները։ Վերջապէս ի՞նչ օգուտ են ստանում ծաղիկներն իրենց հոգեշունչ անոյշ բուրումից և քաղցրահամ մեղքից։ Միթէ այդ բոլորը, նրանց համար նշանակութիւն չունեցող, բնութեան մի անմիտ խաղ է։ Կամ միթէ դրանք ստեղծուած են միմիայն մարդու քմահած հայեցքներին ու ճաշակին բաւականութիւն տալու. ոչ ամենեին. որովհետեւ բնութեան մէջ ամեն ինչ իւր պաշտօնն ու նպատակն ունի»։

«Այժմ բոլորովին ապացուցուած կարող է համարուել, որ ծաղիկների գոյնը, հոտն ու մեղքը իբրև մի միջոց են ծառայում միջատներին գրաւելու։ Խոկ միջատները այդտեսակ բոյսերի համար անհրաժեշտ են, որովհետեւ նրանք, ծաղկից ծաղեկ թռչուաելիս, մի ծաղկի առէքների վրայից ծաղկափոշին տանում են դէպի միւսի վարսանդը և այդպիսով նպաստում նրանց բեղմնաւորուելու գործին։ Եթէ այդ ծաղիկները ոչ մի գրաւիչ ու հեռուից աչքի ընկնող յատկութիւն չունենային, այն ժամանակ, հասկանալի է, որ միջատների համար

աննկատելի կը մնային և նրանց բեղմնաւորուելն ենթակայ կը լինէր ամեն տեսակ պատահականութիւնների։ Մեղքը զրաւում է միջատին իրեւ քաղցրահամ կերակուր, իսկ հոտն ու գոյնը օգնում են նրան իւր ուղեցած ծաղիկները գտնելու։ Հոտը մանաւանդ մեծ նշանակութիւն ունի գիշերները, երբ ծաղիկները չեն երեւում. և գուցէ հէնց այդ է պատճառը, որ գիշերային թիթեռների օգնութեամբ բեղմնաւորուղ ծաղիկները երեկոյեան գէմեն բացւում և աչքի են ընկնում իրենց առատ անուշահոտութեամբ։ Բայցի գրանից նրանք ընդհանրապէս սպիտակ կամ բաց-գեղին գոյն են ունենում, որ նոյնպէս շատ նպաստաւոր է ծաղկի համար, որովհետեւ այդ գոյները մութը տուած ժամանակ համեմատաբար ամենից լաւ են երեւում։ Թէ յիշաւի ծաղիկների վերցիշեալ բոլոր յատկութիւնները յարմարեցրուած են միջատներին գրաւելու համար, հաստատում է և նրանով, որ ընդհանրապէս այն բոյսերը, որոնք բեղմնաւորուեմ են առանց միջատների օգնութեան, ինչպէս, օրինակի համար, անտառային ծառերի մեծ մասը (կաղնի, եղենի, համարի, հայի և այլն) շատ մանր ու աննկատելի ծաղիկներ են ունենում, և միենոյն ժամանակ զուրկ են լինում թէ գեղեցիկ ու պայծառ գոյներից և թէ մեղքից ու անուշահոտութիւնից»։

Մեղուներն ու թիթեռները, որոնց գործի հետ անտեղեակ մարդը զուցէ և ծաղիկների թշնամի է համարում, իսկապէս նրանց ամենամօտ բարեկամներն են։ Բայցի գրանցից միջատների մի ամ-

բողջ գասակարդ էլ ապրում ու մեռնում է շքեղ ծաղիկների ու նրանց անուշահոտ պսակների մէջ:

Այդ միջատներից քչերն են տեսել և զգացել իրենց ծնողների փայփայանքն ու գգուանքը. քչերը կը տեսնեն իրենց զաւակներին, որոնք գարնանը պիտի երեան, աշնան դրած ձուաներից. Նրանք չեն տեսնի իրենց սերնդին, որովհետեւ չենց նցն աշնանը կը մեռնեն: Նրանց զաւակները մենակ պիտի մնան աշխարհի երեսին, նշյն իսկ իրենց ծնունդից առաջ: Բայց չնայելով գրան, չնայելով որ չեն տեսել իրենց նախորդներին և չպիտի տեսնեն յաջորդներին, այնուամենայնիւ նրանք իրենց կենդանութեան ժամանակ կարծես հոգս են տանում պատրաստելու ձագուկների համար կերակուր ու ծաղիկների պաշար. և թուչոտելով մի ծաղկից միւսը միւնցյն ժամանակ նրանը ակամայ տանում են իրենց հետ արական ծաղիկների բեղմնաւորիչ փոշին դէպի բոյսի իդական անդամները:

Երբ մեղուն կամ մի ուրիշ միջատ, թաքացած արական ծաղկի մէջ, ծծում է միջի քաղցրը հիւթը, այդ ժամանակ նրա դէս ու դէն շարժուելուց պատուում է փոշանօթի բարակ թաղանթը և միջի բեղմնաւորիչ փոշին թափւում է քաղցրասէր հիւրի վերայ. կշտացած միջատը այժմ թուզում է իւր ծարաւը յագեցնելու իդական ծաղիկների թարմացուցիչ նեկտարով և, կարծես իրեւ վարձատրութիւն ստացած անուշահոտ ու մեղրահամ քաղցրահիւթի, նա նրանց համար բերում է իւր մաղիկների վերայ թափուած բեղմնա-

ւորիչ ծաղկափոշին: Այդպիսով միջատները ծաղիկներից ստանալով իրենց սնունդը, միւնցյն ժամանակ պահպանում են նրանց կեանքը, նպաստում են նրանց բեղմնաւորուելուն և անդիտակցաբար պտուղներ ու բոյսեր են պատրաստում իրենց սերնդի համար, որին չպիտի արժանանան տեսնելու:

Երկար ժամանակ միջատների միջոցով ծաղիկների բեղմնաւորուելով գիտնականները համարում էին իրեւ մի բոլորովին պատահական երեսյթ. Նրանք կարծում էին, որ բոյսերի կեանքի համար միջատների ներկայութիւնը անհրաժեշտ չէ, որ առանց նրանց օգնութեան էլ ծաղիկները կարող են բեղմնաւորուել միմիպայն քամու միջոցով: Բայց սրանից մի քանի տասնեակ տարի առաջ բոյսի բեղմնաւորուելու մի այնպիսի դէպը գտան, որը ընդհանուր զարմացը պատճառեց: Դա համարեա մի անհաւատլի դէպը էր, և եթէ չհաստատուեր բազմաթիւ փորձերով, կարող էր թուել, թէ մի որևէ է հեքեաթից վերցրած ցնորաբանութիւն է:

Մէ ծաղկի ստանկէլի բեղմնաւորութիւնը: Բեղմնաւորուելու այդ զարմանալի երեսյթը պատկանում է մի թունաւոր բոյսի, որը յայտնի է կիւտաղն (սղակն) անունով և որը յաճախ բուսնուում է շինութիւնների ու ցանկապատերի կողքերում: Գիտութիւնը, որ ամեն մի քայլափոխում հետամուտ է բնութեան օրէնքներին, չէ մոռացել և այդ բոյսին, որ արհամարհուած է բնութեան սքանչելի երեսյթների վերայ անտարբերութեամբ նայող մարդկանցից:

Այդ բոյսի ծաղկելը աչքի է ընկնում իւր խիստ  
տարօրինակ կազմութեամբ: Նրա բաժակը իւր  
ձեռվ յիշեցնում է փակ կակաչը, միայն այն զանա-  
զանութեամբ, որ նա կազմուած է ոչ թէ վեց ի-  
րար կպած թերթիկներից, ինչպէս կակաչն է, այլ  
փակ պարկի ձեւ ունեցող մի թերթից, որի կլոր  
գագաթի վերայ գտնուում է մի փոքրիկ անցք: Ահա  
այդ պարկի մէջն են գտնուում կիրկազոնի վարսանդն  
ու փոշանօթները, որոնք բոլորովին այլ կերպ են տե-  
ղաւորուած, քան կեռասենու ծաղկի մէջ: Նրա փոշա-  
նօթները չեն գտնուում բարակ թելիկների վերայ, այլ  
կպած են խիստ զարգացած վարսանդի տակից: Առա-  
ջին հայեացը այնպէս է թւում, թէ գործարաննե-  
րի այդ տեսակ կազմութիւն ունեցող ծաղկի բեղմնա-  
ւորուելը համարեա անհնար է. ծաղկելը ծածկուած  
է, ուրեմն և քամին այդտեղ չէ կարող այն դերը  
կատարել, ինչ որ նա կատարում է այն դէպքում,  
երբ բոյսի արական ու իգական գործարանները բո-  
լորովին բաց տեղաւորուած են լինում միւնցն  
ծառի զանազան ծաղկների մէջ և կամ չոկ չոկ  
ծառերի վերայ, նոյն իսկ շատ մեծ տարածութիւն-  
ներով իրարից անջատուած:

Ակնյայտնի է, որ կիրկազոնի բեղմնաւորուելու  
գործում քամին ոչ մի նշանակութիւն չունի. Նրա  
դերը այդ տեղ իւր վըս է առնում միջատը,  
որը երբեւ վարձատրութիւն իւր արած ծառայու-  
թեան զրկում է կեանքից:

Ինչպէս ասացինք, կիրկազոնի ծաղկի բաժա-  
կը վերեից մի փոքրիկ անցք ունի: Ահա այդ անց-

քով տմեն տարի ներս է մտնում մի միջատ, որ-  
պէս զի ծծի այն քաղցր հիւթը, որ թաքնուած է  
նրա մէջ: Նա մտնում է իւր ապագայ գերեզմա-  
նը, ճանապարհին ոչ մի արգելքի չհանդիպելով.  
թէպէտե ծաղկի բերանը ծածկուած է լինում եր-  
կար ու բարակ թելիկներով, բայց նրանք չեն խան-  
գարում միջատին, որովհետեւ նրանց ծայրերը գէ-  
պի ներս են դարձրուած, բոլորովին այնպէս, ինչ-  
պէս երբեմն միների համար պատրաստուած թա-  
կարդների անցըերն են լինում: Ինչպէս մուկը ան-  
վըտանդ մտնելով թակարդի մէջ, իր մարմնով  
բաց է անում ճանապարհը փակող՝ զէպի ներս  
դարձրած երկաթէ սրածայր ճաղերը և վերադար-  
ձին նոյն այդ ծաղկերին հանդիպում է իբրև  
իւր մահուան զէնքերի, այնպէս էլ կիրկազոնի պար-  
կաձեւ բաժակի անցը փակող թելերը ներս են  
թողնում միջատին, և նա անվտանդ հասնում է  
ծաղկի սեռական գործարաններին. այստեղ խեղձ  
կենդանին վերջին անգամ վայելում է բնութեան  
անուշաշամ պարզեր. և երբ ուզում է դուրս գալ  
ծաղկի միջեց ու հեռանալ աւաղ այն ժամանակ  
անցը թելերը փակում են նրա ճանապարհը:  
Ի զուր է նա աշխատում զուրս պրձնել լսոս աշ-  
խարհ, նրա բոլոր ջանքերը ապարգիւն են: Զգա-  
լով իւր կորուստը, խեղձ միջատը՝ զլուխը կոր-  
ցրած, սկսում է վազգվել մի անկիւնից դէպի  
միւսը, իրեն այս կողմն ու այն կողմն է խփում  
և այգպիսով այնպիսի զօրեղ ցնցումն է առա-  
ջացնում ծաղկի մէջ, որ փոշանօթները պատռուում

են ու փոշին բարձրանալով նստում է վարսանդի սպիթի վերայ:

Կարելի է մեր ընթերցողները սպասում են, որ աշա ճանապարհը փակող թելիները յետ կը քաշուեն ու աղատութիւն կը շնորհեն խեղճ արարածին, իրբե վարձատրութիւն նրա արած ծառայութեան ու կրած տանջանքների. բայց բնութիւնը, թող ներուի մեզ ասելու, ապերախտ բնութիւնը նրան կեանք չէ պարզեռում. այլ ընդհակառակը մատնումէ նրան չարատանջ մահուան մութ ու խեղգիչ բանտի մէջ: Անբախտ միջատը մահ է գտնում այնտեղ ուր կեանք էր փնտուում իւր քաղցը յագեցնելով: Նա մեռնումէ որպէս զի կեանք պարզեի բոյսին:

Մաղկների հրաշալե բեղնատերուելը ու նրանց նշանակունենք: Կիրկազոնի բեղմնաւորուելը այնքան զարմանալի է, որ մենք վստահանում ենք մի քանի տող էլ նուիրել նրան:

Դիտողութիւններն ու փորձերը դիտնականներին համոզել են, որ կիրկազոնի ծաղկի բեղմնաւորուելը ուրիշ կերպ անհնարին է. որովհետեւ, միջատի մուտքը դէպի ծաղկի ներսը փակելիս, միշտ նկատել են, որ վերջինս թառամում է անպատճե իսկ ընդհակառակը, երբ այդպիսի մի արգելք չէ լինում, այն ժամանակ փոշանօթներն ու վարսանգը հասնելուն պէս, երեւումէ իսկցյն և միջատը, բեղմնաւորում է ծաղկեկը ու իւր կեանքը զոհում նրան:

Սցդպիսի փորձերից յետոյ, այդ երեցիթը պա-

տահական մի բան համարելը բոլորովին հակառակ կը լինէր առողջ գատողութեան: Կիրկազոնի ամբողջ կազմութիւնը յարմարեցրւած է միջատի միջոցով բեղմնաւորուելուն: Նրա մուտքը ծածկող թելիները աինյայտնի կերպով ծառայում են այն բանին, որ միջատը աղատ կերպով ներս մտնի, բայց այնտեղից չկարողանայ գուրս գալ: Եթէ զգոյշութեամբ կտրտենք այդ թելիները և կամ բաժակի վերայ մի փոքրիկ ծակ բաց անենք, որի միջով միջատը կարողանայ աղատ կերպով գուրս գալ տոպրակից, առանց փոշանօթները պատռաելու և մեծ ցնցում առաջացնելու, այն ժամանակ ծաղկեկը չէ բեղմնաւորուում և մնում է անպատճել:

Կիրկազոնի վերայ այդ բոլորը նկատելուց յետոյ, ովք է կարող հերքել այն կապը, որ բնութիւնը ինքը դրել է նրա ու միջատի մէջ, այն միջատի, որը իւր կեանքի գնով պահպանում է բոյսի դյութիւնը:

Ծաղկների բեղմնաւորուելը դիտողի առաջ բաց է անում հրաշալի երեցիթների մի ամբողջ կարգ, սակայն այդ կարգը այնքան երկար է, որ բոլորը մի առ մի գրելու համար հատորներ էր հարկաւոր: Բայց որպէս զի իմ սիրելի ընթերցողը գոնէ մասամբ այդ երեցիթների հետ ծանօթացած լինի, հարկաւոր եմ համարում, պատի կազմակերպութիւնը նկարազը երեց առաջ, ծաղկեկների բեղմնաւորուելու մի դէպք ես բերել:

Կան շատ բջյուեր, որոնք ջրի տակ են ապրում և ջրի տակ ծաղկում: Դրանց մէջ էլ ինչպէս յա-

մաքային բոյսերի մէջ, կան այնպիսիները, որոնց  
արական ու իգական գործարանները չեն դտնւում  
անմիջապէս իրար կողքի՝ միևնոյն ծաղկի կամ  
միևնոյն բոյսի վերայ: Ապա ի՞նչպէս է ծաղկափո-  
շեն հասնում վարսանդին: Այստեղ էլ ծաղկների  
բեղմնաւորուելը պակաս զարմանալի երեսյթ չէ  
ներկայացնում:

\*.) «Վերցնենք, օրինակի համար, Գալաքուն Վալեն-  
էրիս կոչուած ջրային բոյսը: Երբ բեղմնաւորուելու  
ժամանակը մօտենում է, արական ծաղկները կար-  
ծես զգալով որ գործելու բոպէն հասել է, կտըր-  
ուում են իրենց կարծ կոթերից, դէպի վեր են  
բարձրանում և, փոքրիկ ու սպիտակ պարկիկների  
մէջ փաթաթուած, սկսում են լողալ ջրի երեսին:  
Հէնց այդ նոյն միջոցում իգական բոյսը, որի ծա-  
ղկները ամրացած են լինում երկար ու խցահանի  
նման զալարուն ցօղունների վերայ, առաւոտեան  
արշալայսը բացուելուն պէս, պարզում է իւր խո-  
պոպ ցօղունները և աշա ծիրանազոյն ծաղկները,  
իրենց քնքոյշ դէմքը դուրս հանելով ջրի տակից,  
սկսում են այս ու այն կողմը գառնալ և տենչալից  
սրտով որոնել արական բեղմնաւորիչ ծաղկափոշին:  
Երեկոյեան դէմ բոյսը կրկին ոլորում է իւր ցօղուն-  
ները և ծաղկները դարձեալ խորասուղւում են  
ջրի տակից: Եթէ բեղմնաւորուելը արդէն կատա-  
րուել է, այն ժամանակ իգական ծաղկնը այլու չէ  
երեսում ջրի երեսին. որովհետեւ բեղմնաւորուած  
սաղմը միայն ջրի տակին է կարող զարգանալ. իսկ

\*.) Յաւելուած թարգմանչից:

թեէ ոչ նա առաւոտեան կրկին դուրս է գալիս  
ջրի երեսը և այդպէս ամեն օր կրկնում է նշնը,  
մինչեւ որ, զուգաւորուելով ընտրեալի հետ, իւր  
բաղձանքին կը հասնի»:

Այսպէս ուրեմն ծաղկների բեղմնաւորուելու  
գործում միջնորդի դեր են կատարում ոչ միայն  
քամին ու միջատները, այլ և ջուրը, որը իւր երե-  
սին լողացող իգական ծաղկների համար դուրս է  
բերում իւր խորքից թեթև արական բեղմնաւո-  
րիչ ծաղկափոշին:

Մարդն էլ չէ զիջանում բնութեան և պա-  
կաս դեր չէ կատարում այդ գործում: Ծաղկ-  
ների արհետական բեղմնաւորումը արդէն պար-  
տիզպանութեան ճիւղերից մէկն է դառել: Մի տե-  
սակ ծաղկի վարսանդի վերայ թափ աալով մի ու-  
րիշ տեսակի ծաղկափոշին, մարդո ստեղծում է  
բազմազան նաշխուն ծաղկներ. այդ միջոցով այժմ  
արդէն ստացւում են հրաշալի գեղեցկութիւն ու-  
նեցող ծաղկներ և անուշահամ պառուզներ: Ծա-  
ղկների բեղմնաւորուելու գաղտնիքների ուսումնա-  
սիրութիւնը, բացի այն որ բաւականութիւն է  
տալիս մարդու գեղասիրական կարիքներին, ան-  
հրաժեշտ է և նրա մնալի համար:

Դաշտերի անպաղաբերութիւնը անկասկած մէծ  
կապ ունի և բեղմնաւորուելու պակասութեան հետ.  
ուստի հասկանալի է, որ բնութեան ուսումնախ-  
րութիւնը այդ կողմից էլ կարող է ամբողջ մարդ-  
կային սեռի բարեկեցութեան համար ահազին նշա-  
նակութիւն ունենալ:

կեռասենու բեղմաս-ոլու-ելու: Այժմ մենք արդէն պիտի խօսենք այն երևոյթների մասին, որոնք կատարւում են ծաղկի մէջ, ծաղկափոշին վարսանդի վերայ ընկնելուց յետոյ. ուստի նորից մի հայեացք ձգենք իգական գործարանի կազմութեան վերայ:

Ծաղկի իգական գործարան ասելով՝ մենք հասկանում ենք նրա վարանով որը այդ անունը ստացել է, իւր ձեռվ սանդի կոթին նման լինելու պատճառով։ Վարսանդի հաստ և ուստած ներքին մութ-կանաչագոյն մասը, որ կեռասենու ծաղկի մէջ, ինչպէս տեսանք, գտնուում է բաժակի հիմքի վերայ, կոչում է սերմաշան. դրա շարունակութիւնը դէպի վերև կազմում է բարակ, խողովակաձև, դեղին-կանաչագոյն հաղոլութեալ որի ծայրին գարնում է շրթնաձև ապին։

Բեղմանարիչ փոշին ընկնելով սպիի վերայ, երկար ժամանակ չե մնում այնտեղ. նա շուտով մտնում է հաղորդիչ խողովակի մէջ և նրա միջոկ անցնում սերմարանը, ուր իսկապէս կատարւում է պաղի ստեղծագործութիւնը։

Ինչպէս կենդանիների, այնպէս էլ բոյսերի մէջ պտուղը կազմում է ոչ թէ արական բեղմաւորիչ հեղուկից կամ փոշուց, այլ այն սաղմից, որ բնութիւնը պատարաստ դրել է մօր արգանդի կամ ձուի մէջ. սակայն բեղմաւորիչ հեղուկի կամ փոշու մասնակցութիւնն էլ անհրաժեշտ է, սաղմի մէջ շու մասնակցութիւնն էլ անհրաժեշտ է, սաղմի մէջ դորձունէութիւն առաջնելու համար, որի նոր գործունէութիւն առաջնելու համար, որի շնորհիւ միայն վերջինս կերպարանափոխում ու դառնում է կենդանական կամ բուսական պտուղը

կեռասենու սերմարանում գանւում է մի բուսական ձու, որից յետոյ պիտի զարգանայ պտուղը։ Եթէ ծաղկափոշին չէ բեղմաւորում նրան,—նա չորանում է։ Բնդհակառակը եթէ ծաղկափոշին մօտենում, կազում է այդ ձուին, այն ժամանակ նրա ազգեցութեամբ ձուի մէջ նոր գործունէութիւն է առաջանում և սկսում է պտղի կազմակերպութիւնը։ Այսպէս ուրեմն պտուղն էլ իգական բոյսի երեխան է, որը կեանք է ստացել բեղմաւորիչ փոշու ներգործութեամբ։

Երբ կեռասենու ծաղկները կը թառամեն և բամին կը կոտրտի նրանց պատկի սպիտակ թերթիկները, այն ժամանակ արդէն դժուար չի լինի գուշակել թէ որ ծաղկից կարելի է կեռաս ստանալ և որից ոչ Առէցըները չորացան. սպին ու խողովակաձև հաղորդիչը մեռնում են, կանաչ բաժակը դժոնը փոխել թառամել է և ընկնելու վերայ է. չէ մեռել միայն բեղմաւորուած ծաղկի սերմարանը. նա մեծացել է ծաւալով։ Կ'անցնի էլի մի քանի օր, ծաղկի բոլոր մասերը կը թափուեն, իսկ սերմարանը կը կերպարանափոխուի կեռասենու մատղաշ ու կանաչ պտղի։ Սակայն գա դեռ ևս կեռասենու պտուղը չէ, այլ միմիայն նրա արտաքին կեղեր։ Թէպէտեւ սովորաբար մենք նրան ընդունում ենք իրեւ իսկական պտուղը, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ բեղմաւորուած ու զարգացած ձուիկը, դանում է այդ կեղեր տակը՝ կորիզի մէջ։ Սերմարանը— դա կեռասենու արդանդն է, որի մէջ ապ-

բում է նրա սաղմը և սնունդ առնում այն կերակրով, որ բնութիւնը ինքը պատրաստել է այնտեղ նրա համար:

Պատունելո՞ ո՞ հոգացար բնութիւնը: Հասած կեռասը չէ պահում իր վերայ այն ծաղկի յետքն անգամ, որից նա կազմուել է: Ծաղկի միայն մի մասի մնացորդներն են փոքր 'ի շատէ յիշեցնում կեռասի ծագումը: Կեռասենու պառողը, ինչպէս վերև էլ ասացինք, ոչ այլ ինչ է, եթէ ոչ զարգացած սաղմը և նրան շըջապատող սերմնարանը, որը առաջ տեղաւորուած էր ծաղկի մէջ: Բաժակը թառամեց ու ընկաւ, իսկ սերմնարանը մնաց նոյն կոթի վերայ, ուր ամրացած էր բաժակը: Նրանից կեռասենու վերայ ոչինչ չմնաց, բայց կոթի այն լայն ծայրից, որը բոնելով պաղի ներքին մասը, բայց չմիանալով նրա հետ, յիշեցնում է բաժակի նախկին տեղը: Պաղի վերին մասում երբեմն մի փոքրիկ փոսիկ է գտնւում, իսկ նրա մէջ միշտ չորացած վարսանդի մնացորդը, որ փոքրիկ կոճակի նմանութիւն է ունենում:

Միենյն կերպով կազմուում ու զարգանում են և միւս բոլոր պառուղները. այն զանազանութեամբ միայն, որ շատ բոյսերի մէջ սերմնարանը փոխանակ բաժակի մէջը տեղաւորուած լինելու, նրա տակն է գտնւում: Ահա թէ ինչու հասած խնձորի ծայրին սովորաբար մի քանի հատ չորացած ու կուչ եկած թերթիկներ են լինում, իսկ նրանց մէջ տեղում զարձեալ մի փոքրիկ կոճակիկ. այդ թերթիկները չորացած բաժակի մնացորդներն են, իսկ

կոճակիկը, ինչպէս որ կեռասի վերայ էլ տեսանք, վարսանդի մնացորդները: Այսպէս ուրեմն խնձորի վերայ ծաղկի յետքերը աւելի աչքի ընկնող ու պարզ են լինում, քան կեռասի վերայ. այդ պատճառով էլ խնձորի կոթը, որի ծայրը կեռասի կոթի նման չէ լայնանում, աւելի սերտ ու ամուր է լինում միացած պաղի հետ: Բնութեան մէջ ամեն ինչ իւր նշանակութիւնն ունի, ինչպէս և այս դէպքում պաղի կոթը. եթէ նա թոյլ լինէր կած, ինչպէս կեռասինը, այն ժանանակ խնձորը, իւր ծանրութեան պատճառով, դեռ չհասած վայր կ'ընկնէր: Նոյնը կարելի է ասել տանձի, սերկելի, վարունի և դրանց նման ուրիշ պառուղների մասին, որոնց ծայրերին գտնւում են չորացած ծաղկի մնացորդները:

\*.) «Ինչպէս յոգատար մայրը իւր քնքոյշ ու սիրելի զաւակին, փաթաթելով խանձարուրի, մէջ խնամում, կերակրում ու պաշտպանում է ամեն տեսակ պատահարներից, այնպէս էլ արարչագործ բնութիւնը պաղի կամ սերմի քնքոյշ սաղմին մատակարարում է ամեն բան, ինչ որ անհրաժեշտ է նրա աճման ու զարգացման համար: Եւ որովհետեւ պառուղների կամ սերմերի մեծ մասը այնպիսի պայմաններում են հասնում, որ կամ տարուայ ժամանակի ուշ լինելու և կամ յարմարաւոր տեղի պակասութեան պատճառով, նրանց սաղմերը չեն կարող անմիջապէս ծլել ու ածել, ուստի բնութիւնը այդ սաղմերի պաշտպանութեան համար

\*) Յաւելուած թարգմանչից:

այնպիսի միջոցներ պիտի պարզեցր, որ նրանք կարողանային գոնէ մինչև մի որոշ ժամանակ անվըտանդ պահել իրենց աճելու ընդունակութիւնը: Այս հետո այդ նպատակով է, որ նրանցից շատերը ծածկուած են լինում կարծրամաշկով կամ թեփով, ինչպէս հայաբոյսերն, ընդեղէններն ու վայրի սերմերն են. միւսներն ունին հաստ ու պինդ կճեպներ, օրինակ ընկցող, նուշը, կաղինը, շազանակը և սրանց զանազան տեսակները. և վերջապէս կան այնպիսիներն էլ, որոնք, բացի պինդ կճեպից, արտաքուստ էլ շըջապատուած են լինում զանազան մասլից ու փափուկ նիւթերով, ինչպէս մեր պարտէզների պտուղներն են: Մի քանի սերմերի մէջ այդ պաշտպանողական միջոցները այն աստիճանի զարմանալի կազմութիւն ունեն, որ նրանք կարող են, առանց կորցնելու իրենց սաղմային զօրութիւնը, մնալ անվտանդ 20, 30 և մինչև անզամ 100 տարուց աւելի: Եղիպատական հին թագաւորների գերեզմանների մէջ գտնուած են այնպիսի հայահատիկներ, որոնք յանելուց յետոյ առողջ բոյսեր ու հիանալի պտուղներ են տուել, չնայելով որ նրանք այդ գերեզմանների մէջ մնացել են երեք հաղար տարուց աւելի»:

«Պառ-պների ու երթի առաջածու-ելը: Երկրագործը կամ պարտիզպանը, հողը մշակելիս, միշտ աչքի առաջ է ունենում մի քանի այնպիսի անհրաժեշտ պայմաններ, որոնց չետեւել նա չէ կարող»:  
«Նախ նա երբէք նցն հողի վերայ շարունակ միւսնոյն սերմը չէ յանում, այլ միշտ՝ երկու երեք

տարին մի անգամ փոփոխում է. հակառակ դէպքում, ինչպէս ասում են, հողը ոյժից կ'ընկնի և նա այլ ևս չէ կարող արդիւնք ստանալ. և այդ հասկանալի է. իւրաքանչիւր մի տեսակ բոյս, իւր աճելու ու զարգանալու համար, հողից ջոկ տեսակ էլ նիւթեր է ստանում: իսկ եթէ մի քանի տարի շարունակ միւսնոյն բոյսը յանենք նոյն տեղում, շատ պարզ է, որ նա ժամանակի ընթացքում կը սպառի, կը վերջացնի հողի մէջ եղած այն պատրաստի նիւթերը, որոնցից կախուած է նրա զյութիւնը. մինչ գեռ այդ նոյն հողի վերայ կարող է շատ լաւ աճել մի ուրիշ տեսակ բոյս, որին նախկին բոյսի համար անհրաժեշտ նիւթերը հարկաւոր չեն, կամ եթէ հարկաւոր էլ են, շատ չնչին քանակութեամբ: Երկրորդ՝ հողագործը միշտ աշխատում է մի փոքրիկ կտոր հողի վերայ ընդհանրապէս մեծ քանակութեամբ սերմ ցանել. որովհետեւ եթէ ցանած սերմը համեմատաբար շատ աւելի լինի, քան հարկաւոր է, այն ժամանակ աճած բոյսերը, տեղի պակասութեան պատճառով, կը սկսեն իրար խեղդել նեղուածքութիւն պատճառել և հետեւանքը այն կը լինի, որ նրանք կը մնան վախտ, թոյլ ու անպրոցաբեր, որ, ի հարկէ, հողագործի արդիւնաբերութեան համար խիստ աննպաստ է: Եւ վերջապէս՝ ոչ մի պարտիզպան մեծ ու շուաքաւոր ծառերի տակ չի տնկի ուրիշ փոքրիկ բոյսեր, որովհետեւ վերջիններս թէպէտե կը կպչեն, չեն չորանայ, բայց և այնպէս, արեգակի անմիջական ձառագայթներից զրկուած լինելով, չեն մեծանայ, կը մնան կարձա-

հասակ, ոչ կը ծաղկեն և ոչ էլ պտուղ կը տան»:

«Այս բոլորից յետոյ հասկանալի է, թէ ինչու բոյսերի կանոնաւոր աճելու և բազմանալու համար անհրաժեշտ է, որ նրանց սերմերն ու պտուղները ոչ թէ տարիների ընթացքում շարունակ իրար վերայ թափուեն միւնոյն տեղում, այլ որքան հնարաւոր է, ցրուեն ու տարածուեն դանազան ազատ ու բաց տեղեր»:

«Աչա բնութիւնն էլ այդ բոլորն՝ ինկատի ու նենալով սերմի ու պտուղների կենսունակութիւնն ապահովելուց յետոյ, իշարէէ, չէր կարող հոգ չը տանել և նրանց բազմանալու ու աճելու վերայ եւ յիրաւի, ուր որ գնանք, ուր էլ դարձնենք մեր հայեացքները, եթէ միայն բոյսի գոյութեան համար ամենափոքրիկ հնարաւորութիւն կայ, այնտեղ իսկըն երեսում է և սերմը կամ պտուղը ու իր արմատները տարածում հիւրընկալ հողի մէջ. երբեմն լերկ ապառաժներն անգամ զարմանալի կերպով ծածկուած են լինում բուսականութեամբ. այդ ժայռերի ամենափոքրիկ ու նեղ ձեղքերում հաւաքուած փափուկ հողն էլ չէ խուսափում իւր կեանքը շարունակելու համար աստանդական թափառող սերմի շրջահայեաց խուզարկութիւնից»:

«Ինչպէս ծաղեկների բեղմանաւորման գործում, այնպէս էլ այստեղ բնութեան այդ նպատակը իրագործելու համար, օգնութեան են հասնում սերմերի և պտուղների բազմազան կազմութեան ու գոյնի հետ միասին քամին ու ջրերը, կենդանիներն ու մարդիկ»:

«Այստեղ էլ քամին ահազին գեր է կատարում. բոյսերի մի ստուար բազմութիւն իւր գոյութեամբ նրան է պարտական. այդ բոյսերից մեծ մասի սերմերը շրջապատուած են բարակ թևերով (հացի, չինարի, լորի, թղթենի և այլն) և կամ ծածկուած են լինում երկար մազային թելիկներով (բամբակ, կաթնածաղկի, ուռի, ոփի և այլն) և քամին, օգտուելով նրանց համեմատական թեթեսութիւնից, թոցնում ատանում է իւր հետ հեռաւոր տեղեր, ու այդպիսով տարածում աշխարհի շուրջը: Կան բոյսեր էլ որոնց սերմերը քամին գետնի վրայից զլորելով է ցրւում, օգտուելով նրանց փշոտ ու գնդակաձե կազմութիւնից»:

«Կենդանիներն ու թռչունները նցնպէս պակաս գեր չեն կատարում սերմերի ու պտուղների տարածման գործում: Եատ անգամ, այգուց կամ դաշտից վերադառնալիս, նկատած կը լինէք, որ ձեր շորերից կը ու փշոտ սերմեր են կպել. աչա շատ սերմեր էլ տարածում են այդ միջով. երբ կենդանին նրանց հօտովը անցնելիս թեթև կերպով դիմչում է, նրանք իսկըն կպշում են կենդանու մազերից կամ բրդից և մնում վրան, մինչեւ որ, բաւական հեռանալուց յետոյ, նա նկատում է ու բերնով կամ շանգերով գեն ձգում:

«Մեր պարտիղի ու վայրի պտուղների մեծ մասն էլ համարեա միմիայն կենդանիների ու թռչունների օգնութեամբ է տարածում: Բոլորս էլ շատ լաւ զիտենք, որ այդ տեսակ պտուղների սաղմերը ընդհանրապէս պաշտպանուած են քարա-


Նման պինդ կճեպով, իսկ երեսից ծածկուած են  
լինում մսալից ու քաղցրահամ նիւթերով: Այդ  
արտաքին մսալից մասն է, որ բացի պաշտ-  
պանողական գեր կատարելուց, իւր պայծառ ու  
գեղցիկ գոյներով զբաւում է կենդանիներին դէ-  
պի իրեն և այդպիսով նպաստում պառզների տա-  
րածման: Կենդանիներն ու թռչունները, ինչպէս  
շատ անգամ և մարդը, հեռուից արդէն նկատելով  
ծառի վերայ ֆալփլող, գեղցիկ ու հասած պառզ-  
ները, մօտենում են նրանց և սկսում ադահու-  
թեամբ ուսել, կուլ տալով քաղցրահամ կեղևի  
հետ միասին և կորիգները. և որովհետեւ կորիգները  
այնպիսի պինդ ու կոշտ կճեպներ են ունենում,  
որ ստամբսում չեն կարող մարսուել, ուստի մի քա-  
նի ժամանակից յետոյ նրանք կենդանու ազեր՝ հետ  
միասին թափւում են հողի վերայ, ի հարկէ, երե-  
մըն աշագին տարածութիւններով հեռու այն տե-  
ղեց, ուր կենդանին կարել էր պառզը»:

“Գետերի յորձանքներն ու ծովային հոսանք-ները նշյալէս անմասն չեն այդ ընդհանուր գործունէութեան մէջ. Նրանք ել ջրերի ափերում բուժնող բոյսերի պառւզներն ու սերմերն են ցըս-ւում աշխարհի շուրջը. Հենց դրա համար ել այդ սերմերն ու պառւզները այնպիսի յարմար. ու անթափանցիկ կեղևներ են ունենում, որ ջրի երեսին երկար ժամանակ կարողանում են անվատնգ լողալ ու իրենց ծննդավայրից հաղարտւոր վերստեղով հեռու երկիրներ ընկնել աճել ու բազմա-նալ»:

«Վերջապէս մի քանի տեսակ բոյսեր էլ իրենք  
են յըւում իրենց սերմերը, կամ շուրջը արձակած  
երկար ցօղունների միջոցով և կամ շնորհիւ սերմը  
շրջապատող այն առաձգական կեղեկի, որը հասնե-  
լու ժամանակ ամենաթեթև յնցումից անգամ ճայ-  
թելով բացւում է և այնպիսի ոյժով դուրս է նե-  
տում մէջը զտնուած սերմերը, որ երբեմն նրանց  
մի քանի սաժէն հեռաւորութեան վերայ միայն  
կարելի է զտնել: Տինածաղիկը դրա ամենալաւ-  
օրինակը կարող է համարուել:

«Սիրելի ընթերցող, մենք ապրում ենք դիւթական ու չքնաղ աշխարհում. մեր շուրջը համաշխափութիւն ու գեղեցկութիւն է տիրում. և երբ խորասուզուենք բնութեան գաղանիքների մեջ, ամեն տեղ հրաշալի հետեղականութիւն կը նկատենք. ոչ մի բան աւելորդ չէ. ոչ մի բան անմիտ ու պատահական չէ. մինչեւ անգամ մանրագիտային ծաղկափոշին ու ամենաշնչին սերմի կեղեն իրենց սքանչելի կազմութեամբ նոյնն են հաստատում անհերքելի կերպով: Եւ այս փոքրիկ գրքոյկը իւր նպատակին հասած կը լինի, եթէ կարողանայ քո մեջ զարթեցնել ամենափոքրիկ հետաքրքրութիւն անգամ գեպի այդ մոռացուած, բայց հրաշալի բնութիւնը»\*:

\*) Թարգմանիչը խոր փոքրիկ յաւելուածները կազմելիս օգտուելէ Ներբուժի «Ծաղիկներ» պատուղներ և տերեկներ» գրքովէց և Բենեթի «Կոսմոս»-ից:



16306-16313

20 ♂

ՀՀ Ազգային գրադարան



NL1333894 1

ՀՀ Ազգային գրադարան



NL1333893 4

89

